ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

23. 12.2015թ. Որոշում 16-Ն

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

Ռանչպար համայնքում 2016թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1 Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների / ներառյալ ոչ հիմնական / շինության / տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

հիմնական օբյեկտների համար

ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտի համար 5000 դրամ:

բ/ սույն կետի «Ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.

բա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000 դրամ

բբ/ 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 դրամ

բգ/ 1001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 20000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1000 դրամ

դ/ 20քմ և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինության այլ օբյեկտների վերակառուցման ,ուժեղացման , վերականգման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող

դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա/ չի նախատեսվում կիսակառույցների,վերակառույցների ,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500 դրամ:
բ/ բացի օբյեկտների վերակառուցման ,ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառուցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա , բացի սյուն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի ,կիրառվում է նաև նոր շինարարության համար սյուն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:
գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետ նյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա սյուն օրենքի ինաստով այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2500 դրամ
4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել
ա/. ոգելից և ալկոհոլային խմիչքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակ 6250դրամ:
բ/.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար `հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակ 6250 դրամ:
5/ Համայնքի տարածքում
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:
բ/ հեղուկ վառելիքի ,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված

բնական կամ հեղուկցված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ:
գ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000դրամ:
դ/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000դրամ
ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000դրամ:
6/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 2000 դրամ:
7/ Աղբահանության վճար յուրաքանչյուր բնակչի համար տեղական տուրք սահմանել 10 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

8. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու համար մասնակցության վճար սահմանել 3000 դրամ:.
Առաջին, երկրորդ, երրորդ կետերի համար կիրառված է 0,5 գործակիցը:

Ժ.Թունիյան
Վ.Ջուլհակյան
Ա.Բաբայան
Լ. Կոլիյան
Ա. Թամոյան

Ռանչպար համայնքի
ղեկավար՝ Մ. Օհանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Գ. ՌԱՆՉՊԱՐ

ՀԵՌ. 0236-6-12-00

ՈՐՈՇՈՒՄ

23.12.2015թ. N 19 -Ն

2016 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

Ռանչպար համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Տ

Հաստատել բյուջեի նախագիծը, որպես 2016թ. Ռանչպար համայնքի բյուջե:

1. Հարկեր և տուրքեր, այդ թվում	4209,9 հազ.դր.
գույքահարկ անշարժ գույքից, այդ թվում	1536,0հազ.դր
1/1 Գույքահարկ շենքի և շինությունների,որից	255,1հազ դր.
ա/ ֆիզիկական անձանցից	71,3հազ դր.
բ/ իրավաբանական անձանցից	183,8հազ.դր.
գ/ հողի հարկ, այդ թվում	2473,9հազ.դր.
դ/ֆիզիկական անձանցից	2280,8հազ.դր.
ե/ իրավաբանական անձանցից	193, 1հազ.դր.
1/2. Գույքահարկ փոխադրամիջոցներից	1280,9հազ.դր.
1/3. Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար,այդ թվում.	
ա/ Տեղական տուրքեր,որից	200,0հազ.դր.
բ/Ծխախոտի վաճառքի թույլտվություն	100,0հազ.դր.
գ/Խմիչքների իրացման համար	100,0հազ.դր.
1/4. Պաշտոնական դրամաշնորհներ/դոտացիա/,	23876,7հազ.դր.
Այլ եկամուտներ	2703,6հազ.դր.
ա/ Հողի վարձակալություն	2703,6հազ.դր.
Ընդամենը վարչական բյուջեի եկամուտներ	հազ.դր.
Ֆոնդային բյուջեի եկամուտներ	հազ.դրամ
Ռանչպար համայնքի եկամուտներ	հազ, դրամ

ՎԱՐՉԱԿԱՆ Ծ Ա Խ Ս Ե Ր

Ծախսերը ըստ շարադրվածի հետևյալ նպատակներով

1. 01-1-1 Օրենսդիր և գործադիր մարմիններ	13456,5հազ.դր.
2. 01.3.3 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	110,0 հազ.դր.
3. 01.6.1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	4800,0հազ.դր
4. 05.1.1 Աղբահանում	1828,5,0հազ.դր.
5. 07.6.2 առողջապահություն	400,0հազ.դր
6. 08.1.1 հանգստի և սպորտի ծառայություններ	50,0հազ.դր
7. 08.2.1գրադարաններ	1090,6,0հազ.դր.

8. 08.2.4 այլ մշակութային կազմակերպություններ 1300,0հազ.դր
9. 08.3.1 հեռուստառադիոհաղորդումներ 400,0հազ.դր

10. 09.8.1 կրթություն 100,0 հազ.դր.
11. 10.7.1 սոցիալական պաշտպանություն 3900,0հազ.դր
12. 11.1.2 պահուստային ֆոնդ 7674,6հազ.դր

Ռանչպար համայնքի 2016թ. վարչական բյուջեի ծախսերը կազմում է 30790,2հազ.դր.:
Թույլատրել համայնքապետին և համայնքի բյուջեով պահվող հիմնարկի ղեկավարի բյուջեով հատկացված գումարների սահմաններում ապրանքների և աշխատանքների գնումների և աշխատանքների ծառայությունների ձեռք բերումն իրականացնել մեկ աղբյուրից գնումներ կատարելու ճանապարհով:
Հաստատել,որ 2016թ.բյուջեի կատարման ընթացքում պաշտպանվածության են ենթակա աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները:
Հաստատել,որ համայնքի 2016թ. բյուջեից ծախսերի ֆինանսավորումը կատարվում է բյուջեից ստացված փաստացի մուտքերի սահմաններում,պահպանելով սույն որոշմամբ նախատեսված ծախսերի համամասնությունները:

Ժ.Թունիյան
Վ.Ջուլհակյան
Ա.Բաբայան
Լ. Կոլիյան
Ա. Թամոյան

Ռանչպար համայնքի ղեկավար Ս. Օհանյան